



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.98
W-85

1931

338.98

Ա-85

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ

ԲԱՆԱԶԵՎԸ

ԸՆԿ. ՈՐՋՈՆԻԿԻԶԵՑԻ
ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ԳԵՏՀՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

25 OCT 2013

31.9.23

338.98

Ա-85

ւլ

239 17 FEB 2

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ
ԱՌԱՋԻՆ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ

ԲԱՆԱԶԵՎԸ

ԸՆԿ. ՈՐՁՈՆԻԿԻԶԵՑԻ
ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

1784



1931

ՅԵՐԵՎԱՆ

15678 - 52

ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ

Լույս և ընծայվում արդյունաբերության մեջ աշխատողների միութենական առաջին կոնֆերենցիայում ընկ. Որջոնիկիձեյր արած զեկուցման առթիվ ընդունված բանաձևը:

Բանաձևի հրատարակութունը վորոշ զգվարությունների առաջ կանգնեցրեց Պետհրատին՝ տեխնիկական տերմինների բացակայության տեսակետից: Այդ զգվարությունն ավելի լուրջ և դառնում յերբ ի նկատի յե առնվում տեխնիկական մասնայական գըրականության հրատարակության այն մեծ պլանը, զոր առաջադրել և իրեն Պետհրատն այս տարի:

Այս բնույթի ինքնուրույն և թարգմանական աշխատանքները հեշտացնելու և կանոնավորելու համար՝ Պետհրատը ձեռնարկել և համապատասխան բառարանի հրատարակման գործին:

Իսկ ինչ վերաբերվում և այս բանաձևում տեղ գտած տերմիններին, պետք և ասել, զոր նրանք գործածված են վորոշ վերապահությամբ:

ԱՐԴՅՈՒՆԱՅԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ
ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿՈՆՔԵՐԵՆՑԻԱՅԻ
ԲԱՆԱԶԵՎԸ

ԸՆԿ. ՈՐՋՈՆԻԿԻՉԵՑԻ ԶԵԿՈՒՅՄԱՆ ԱՌԹԻՎ

(Հաստատված ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի նախագահության կողմից)

Համ. Կ. (բ) Կ. Կենտկոմի և ԿՎՀ-ի ղեկավարներ-
յան միացյալ պլենումի ղերեկտիվներում և ԽՍՀՄ
Կենտգործկոմի 3-րդ նստաշրջանի վերջին մեջ կու-
սակցության և խորհրդային կառավարության կողմից
Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության
1931 թվի համար վիթխարի անելիքներ են նշված:

Հնգամյակի յերրորդ, վճռական տարին տնտեսա-
կան զարգացման բոլոր բնագավառներում պետք է
տա աճման տեմպերի նոր վերելք, պետք է հանդիսա-
նա ել ավելի արագ առաջխաղացման տարի Խ. Միու-
թյան ժողովրդական տնտեսության նոր տեխնիկական
բազա ստեղծելու և «հասնել ու անցնել» լոգունգը
կենսագործելու գործում: 1931 թվին սոցիալիստական
սեկտորը բացարձակ գերակշռություն պետք է ստանա
նաև գյուղատնտեսության մեջ և զրանով իսկ պիտի
ավարտվի Խ. Միության սոցիալիստական տնտեսու-
թյան հիմքի կառուցումը:

Այս հեռանկարը նշանակալի չափով պայմանա-

վորված և հնգամյակի առաջին յերկու տարիների ներ-
շումները դերակատարումը: Ի հակադրություն կապի-
տալիստական աշխարհին, վորը դաժան տնտեսական
ճգնաժամ և աղքատ խՍՀՄ-ում տարեց-տարի տնտե-
սական աճման տեմպերն արագանում են և ամբողջ
ֆրոնտով հաղթականորեն ծավալվում և սոցիալիստա-
կան արշավը:

Համաշխարհային պատմական նշանակություն
ունեցող աշխարհային խնդիրները, վոր առաջադրված և լուծել
այս տարի հատուկ պատասխանատվություն են դնում
արդյունաբերության բոլոր աշխատողների վրա, վոր
(արդյունաբերությունը) առաջնորդող դեր է կատարում
մեր ամբողջ ժողտնտեսության սոցիալիստական վերա-
կառուցման գործում: Վերակառուցելով իր տեխնիկա-
կան բազան, արդյունաբերությունը միաժամանակ նոր
տեխնիկական բազա չէ ստեղծում գյուղատնտեսու-
թյունը, արանպորտը և ժողտնտեսության մնացած
ճյուղերը վերակառուցելու համար:

1931 թվին կուսակցությունն ու կառավարու-
թյունը հետևյալ խնդիրներն են առաջադրում արդյունա-
բերությանը՝

տալ 25,7 միլիարդ ուրբլու արտադրանք:

կատարել 6,750 միլիոն ուրբլու հիմնական ներ-
դրումները (ներառյալ շրջանային ելեկտրակայանները):

իջեցնել խնճաբժեքը 10 %-ով, իսկ շինարարու-
թյան արժեքը՝ 12 տոկոսով:

աշխատանքի արտադրողականությունը բար-
ձրացնել 28 տոկոսով:

աշխատավարձը բարձրացնել 6 %-ով:

Արդյունաբերության արտադրանքի աճումը մի-

միայն 1931 թվին՝ հավասար պետք է լինի ցարական
Ռուսաստանի նախապատերազմյան արդյունաբերական
արտադրանքին, իսկ արտադրանքի ընդհանուր ծա-
վալը 1931 թվին 3 անգամ ավելի պիտի լինի նախա-
պատերազմյան արտադրանքից: 1931 թվի պլանը ծա-
նրը արդյունաբերության մի շարք առաջնորդող ճյու-
ղերում ուրվագծում է հնգամյակի իրագործումը 3 տա-
րում (նավթ, ածուխ, ընդհանուր և գյուղատնտեսա-
կան մեքենաշինություն, ելեկտրատեխնիկա, ավտո-
տրակտորային արդյունաբերություն):

1931 թ. կապիտալ աշխատանքների պլանի խըն
դիրն է՝ շտապործման մեջ դել 4 միլիարդ ուրբլու
հիմնական զրամազույթ և ահագին չափերով ընդար-
ձակել յերկրի վառելանյութերի և մետաղագործու-
թյան բազան:

Ծանր մեքենաշինության մեջ ստեղծվում են ար-
տադրական ուժեղ միավորներ, վորոնք կոչված են
ծանր ինդուստրիայի հետագա զարգացումը հիմնել
գլխավորապես յերկրի ներսում արտադրվելիք սարքա-
վորման վրա: Գրեթե նոր և ստեղծվում խորհրդային
դադգյահների կառուցումը: Ուժեղ թափով շարունակ-
վում է մի շարք ավտո-տրակտորային գործարանների
կառուցումը:

Ավելի քան կրկնապատկվում են ներդրումները
քիմիայի և ելեկտրաշինարարության մեջ: Կապիտալ
աշխատանքների պլանը իրագործելու հետևանքով ա-
ճում է խորհրդային Միության անկախությունն ու
պաշտպանունակությունը:

Ցուրաքանչյուր տնտեսվար, բանվոր, ինժեներ
ու տեխնիկական աշխատող պիտի ըմբռնի 1931 թ.

այս պլանը, իբրև մարտական առաջադրանք, վորը ինչ գնով լինի, անհրաժեշտ է կատարել:

1931 թվին արդյունաբերության առաջ գրված խնդիրների կենսագործումը արդյունաբերության մեջ բոլոր աշխատողներից պահանջում է ձեռնկերպության հսկայական ծավալում, վճռականորեն բարձրացնել գործարանների դերը, հետևողականորեն անցկացնելով տնտեսաշովի սկզբունքը տնտեսական կազմակերպության բոլոր աստիճաններում: Հաստատված պլանների հիման վրա ձեռնարկությունների միջև պայմանագրային փոխարարերություն սահմանելը կարևորագույն զենք պիտի ծառայի պայքարելու բյուրոկրատիզմի և անպատասխանատվության դեմ: Պատասխանատվության և աշխատանքի ճշգրտության բարձրացումը պահանջում է նաև, վորպեսզի արդյունաբերության աշխատանքի բոլոր ողակներում կիրառվի միանշանակ ղեկավարությունը: Կոնֆերենցիան շեղում է, վոր Համ. Կ.(բ)Կ. Կենտկոմի դիրքերիցները՝ միանշանակ ղեկավարության մոտին՝ մեծ չափով չին կենսագործվում է կոչ և անում բոլոր տնտեսավարներին ամենակարճ ժամանակում բեկում առաջ բերել այս բնագավառում:

Կապիտալ աշխատանքների ահադին ծավալման և ամբողջ արդյունաբերության տեխնիկական հիմքի արմատական վերակառուցման պայմաններում բացառիկ նշանակություն են ստանում արդյունաբերության տեխնիկական ղեկավարման խնդիրները:

Վճռական պայքար պետք է մղել «ընդհանուր ղեկավարություն» ցույց տալու, առանց դործի տեխնիկական ու ֆինանսատնտեսական կողմին տեղյակ լի-

նելու և ամբողջ ղեկավարության իմաստը թղթեր լատորագրելու մեջ տեսնելու վնասակար տենդենցի դեմ:

«Բալլետիկները պիտի ախրապետեն տեխնիկային: Ժամանակն է, վոր բալլետիկները իրենք մասնագետներ դառնան, վերակառուցման շրջանում ամեն ինչ վճռվում է տեխնիկայով»: «Խնդիրն ուրեմն կաշանում է նրանում, վորպեսզի մենք ինքներս տիրապետենք տեխնիկային, մենք ինքներս տիր ու տիրական դառնանք մեր գործին: Միայն դրա մեջն է չերաշխեքը, վոր մեր պլաններն ամբողջությամբ կկատարվեն իսկ միանշանակ ղեկավարությունը կկիրառվի» (ՍՏԱԼԻՆ):

Այս կապակցությամբ պիտի վերակառուցվի նաև միավորումներին աշխատանքը: Հետևողականորեն կիրառելով տնտեսաշովը ձեռնարկությունների նկատմամբ, ազատելով իրենց միշտ քնքրողական ֆունկցիաներից, միավորումներն իրենց կենտրոնական անելիքը պիտի համարեն ձեռնարկությունների տեխնիկական ղեկավարումը:

Մձում է տեխնիկական կադրերի դերն ու նշանակությունը: Բանվոր դասակարգից ինժեներներին և տեխնիկոսներին նոր կադրեր ստեղծելը վճռական նշանակություն է ստանում: Միաժամանակ աշխատանքի բոլոր անհրաժեշտ պայմանները պիտի ստեղծվեն այն հին մասնագետների համար, վորոնք վերջնականապես կանգնել են խորհրդային արդյունաբերության կառուցողների շարքերում:

Հնգամյակի Յուրդ տարվա խնդիրների իրագործումը պահանջում է, վորպեսզի առավելագույն չափով, սոցիալիզմի դործի համար, ոգտագործվեն չերկրի բոլոր նյութական աղբյուրները: Այստեղից բխում է

անհրաժեշտությունը՝ ամենավճռական և ծավալուն պայքար մղելու վստակական ցուցանիշների համար (ինքնաթիռի իջեցումը, պայքար արտադրանքի վերակի և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար), վորոնք լինելու յե նոր լրացուցիչ ուսուցանանք: Ամեն կերպ ուժեղացնելով վառելիքի և մետաղի հանքահանումը, միաժամանակ անհրաժեշտ և վճռական պայքար մղել չորաքանչյուր կիրառված յերկաթ ու ածուխը խնայելու համար:

Յերկրի բոլոր նյութական ուսուցանանքի լարումը պահանջում է, վորպեսզի առավելագույն չափով ոգտագործվի թե հիւն և թե նոր սարքավորումը: Սոցիալիզմը կառուցելու համար անհրաժեշտ և յեղած սարքավորումից քամել այն ամենը, ինչ նա ընդունակ է մեզ տալ:

Տնտեսի հետագա ամանը մեծապես պիտի նըպաստի նաև ամբողջ հիմնական շինարարության կարգավորումը, նրա եւժանացումը, միջոցների հիմնական մասը անմիջականորեն ձեռնարկության շինարարության վրա գործադրելը և միջոցների կենտրոնացումը այն հաշվով, վորպեսզի ամենակարճ ժամանակամիջոցում շահագործման մեջ դրվեն առավելագույն թվով ձեռնարկությունները:

Յերկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության կոլեկտիվացման ծավալումը նպաստեցին գործադրկության վերացմանը: Ուստի 1931 թվի համար, ինչպես և հետագա տարիներում, բանուժի խնդիրը վրձնական հարցերից մեկն է դառնում արդյունաբերության ամբողջ աշխատանքի համար:

Բանվորական նոր կադրեր ստեղծելը միանգա-

մայն անհրաժեշտ պայման է հանդիսանում արդյունավետ կերպով ոգտագործելու համար այն անագին միջոցները, վոր հատկացվում են նոր գործարանների և ֆաբրիկաների կառուցմանը:

Աշխատանքի ճիշտ կազմակերպումը, մեքենաների լիակատար ոգտագործումը պիտի հանդիսանան սոցիալիստական կուտակման հիմնական աղբյուրը և բանուժի պահպան մեղմացնելու հիմնական միջոցը:

Յեւ վերջապես, բանվորական ուժի պահպան ամենատար կերպով խնդիր է դնում մեր առաջ՝ լայն չափերով մեխանիզացիայի յինթարկել ժողովրդական տնտեսության այն ճյուղերը, վորոնք շատ աշխատող ձեռքեր են պահանջում՝ առաջին հերթին անտառանյութի, տորֆի մթերումը, ածխահանությունը, շինանյութերի ինդուստրիան, ինչպես և շինարարությունը, բնակելու ու պարպելու աշխատանքները:

Անհրաժեշտ է հատկապես առանձին ուշադրության տալիս դարձնել տրանսպորտի վերակառուցման հարցը: Արդյունաբերությունը այս գործում վրձնական դեր պիտի կատարի, ապահովելով վերակառուցման պլանը մեծաղով, առանձնապես նոր տիպի շարժակազմով, ինքնակցման և ինքնաբերական սարքերով: Անհրաժեշտ է վերանայել համապատասխան միավորումների ծրագրերը՝ հնգամյակի մնացած տարիների ընթացքում արտադրանքը մաքսիմալ չափով ավելացնելու համար:

Մեր առաջադրացումը ընթանում է դասակարգային սուր պայքարի պայմաններում: Սոցիալիստական տարրերի՝ տնումը, կուլակության իրքե դասակարգի, լիկվիդացիայի քաղաքականության իրագոր-

ծումը կատաղի դիմադրութիւն են առաջացնում կու-
լակութեան և յերկրի բոլոր կապիտալիստական տար-
րերի կողմից, վսրի արտահայտութիւնը արդյունա-
բերութեան մեջ հանդիսացավ հին մասնագետների մի
մասի ֆլախարարութիւնը, վորոնք հանդես յեկան, ի-
բրև միջազգային իմպերալիզմի անմիջական գործա-
կալներ:

Միաժամանակ առաջին յերկու տարվա նվաճում-
ների և հետագա բուռն վերելքի հեռանկարների հիման
վրա ծավալվում են սոցիալիստական մրցումն ու հար-
վածայնութիւնը, վորոնք հարչուր հաղորդափոք և մի-
լիոնավոր մարդիկ են ընդգրկում: Դա միանգամայն
բացառիկ հնարավորութիւններ, և ստեղծում: Տնտես-
վարների անելիքները այս պայմաններում կայանում
են նրանում, վորպեսզի նրանք գլխավորեն այդ աշ-
խատանքային աճող վոգեւորութիւնը:

Լիովին հաշմանութիւն տալով ԺՏԳԽ-ի նախա-
գահութեան վորոշմանը 1930 թվի արդյունաբերու-
թյան կոնտրոլ թվերի վերաբերմամբ, կոնֆերենցիան
գտնում է, վոր 1931 թ. պլանը հաջողութեամբ կատա-
րելու համար անհրաժեշտ են հետեւյալ ձեռնարկում-
ները:

1. ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

1. Ներկայումս գործադրվող մատակարարման սխա-
տեմը պատճառ է լեզել, վոր ձեռնարկութիւնների ղեկա-
վարներն լիովին մեկուսացել են մատակարարման գործից
վերցրել են տնտեսաշաղկապն ու պայմանագրային փոխ-
հարաբերութիւնները, վորին հետեւելով առաջ է յիկել
ամբողջ մատակարարման գործի բյուրոկրատացում:

մի շարք նյութերի չափազանց կուտակումն ու մշու-
ների՝ խիստ պակասութիւնը, իսկ ախտադից՝ մատա-
արարման անհամաչափութիւնը (անկոմպեկտութիւն)՝
Հայթայթման սխտեմի այս բոլոր հիմնական թերու-
թիւնները ձեռնարկութիւնների ղեկավարներէց վեր-
ցնում են պատասխանատվութիւնը, խախտում են աշ-
խատանքը թե՛ մատակարարման և թե՛ արտադրութեան
գծով:

2. Հիշյալ բացերը վերացնելու նպատակով կոն-
ֆերենցիան միանգամայն անհրաժեշտ է գտնում, վոր-
պեսզի տնտեսաշաղկապն անհապաղ և խստիվ սկսի գոր-
ծադրվել արդյունաբերական ձեռնարկութիւնների ինչ-
պես և զանազան ալ կազմակերպութիւնների փոխ-
հարաբերութիւնների մեջ, ստորին բջիջներից սկսած
մինչև միավորումները ներառյալ:

3. Կազմակերպութիւնների և ձեռնարկութիւն-
ների մեջ չեղած բոլոր փոխադարձ պարտավորու-
թիւնները պիտի ձեւակերպվեն պայմանագրերով, վո-
րոնցով լիակատար պատասխանատվութիւն պիտի
կրեն թե՛ հայթայթողները և թե՛ սպառողները և սահման-
վեն տուգանքներ, տույժեր և ֆլախատուլց գումար-
ներ, վորոնք պիտի կիրառվեն կյանքում և արտացոլում
ստանան ցեխի, գործարանի, միավորման ամսական
բալանսների մեջ:

4. Հայթայթողների և պատվիրատուների միջև
լայն ծավալված պայմանագրային փոխհարաբերու-
թիւնները պիտի հիմնված լինեն մատակարարման
վող գործի ճշգրիտ և պարզորոշ պլանավորման վրա:
Նյութերի մատակարարման պլանները յուրաքան-
չուր կազմակերպութեան ստուգիչ թվերի մեջ պիտի

մտնեն, իբրև նրանց բաղադրիչ մասը, պիտի ներկայացվեն և հաստատվեն ստուգիչ թվերի հետ միատեղ:

5. Նյութերի մատակարարման բալանսները, վոր ներկայացնում են ձեռնարկություններն ու միավորումները, պիտի կառուցվեն ցիխերի ճշտվ հայտարարված պահանջների համեմատ և յերակետ ունենալով թիւ արտադրված միավորի վրա արված ծախսի նորմաները և թե տվյալ ձեռնարկության համար սահմանված պաշարների նորմաները: Անհրաժեշտ է լայնորեն ներգրավել գիտական ինստիտուտները, վորպեսզի նրանք մանրամասնորեն մշակեն արտադրված միավորի վրա ծախսելիք նյութի նորմաները:

6. Տարեկան հաշիւութման պլանների հաստատում պիտի կատարվի վոչ ուշ դեկտեմբերի մեկից, իսկ լեռամսյակներին՝ վոչ ուշ քան տվյալ յեռամսյակը ըսկսվելուց յերկու տասնորակ առաջ:

7. Վերոհիշյալ դրությունների հիման վրա առաջարկել ՆՍՀՄ ԺՏԳԽ-ին՝ մշակել ձեռնարկութիւնների մի սխտեմ, վորով արմատապէս բարեփոխվի մատակարարման սխտեմը:

8. Հալթայթման գործը կանոնավորելով հանդերձ անհրաժեշտ է միաժամանակ ծավալել ամբողջ արդունաբերության ներքին ուսուրաները մօրիլիզացիայի յենթարկելու ուժեղ աշխատանք: Դրա համար առաջարկվում է բոլոր տնտեսական կազմակերպություններին՝ ապրիլի 1-ից վոչ ուշ ավարտել ավելորդ նյութերի և վերանորոգվող սարքավորումների ֆոնդերի հայտարարման, հանման և վերաբաշխման աշխատանքները:

9. Հաշվի առնելով միտադի նշանակութունը մեր

մետալուրգիական ուսուրաները կազմելու գործում՝ կոնֆերենցիան կոչ և անում ձեռնարկությունների բոլոր դիրեկտորներին, սկսած փետրվարի 15-ից, մի ամսվա ընթացքում հավաքել ամբողջ կտորտանքը և ուղարկել մետաղագործական ձեռնարկությունները:

10. Բոլոր ձեռնարկություններում անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել պահեստների գործի կազմակերպման վրա, լիակատար հաշվառման յենթարկելով յեղած բոլոր պաշարները:

Ձեռնարկության նյութերի բոլոր պահեստները լիովին յենթարկվում են ձեռնարկության դիրեկտորին:

11. Հատուկ ուշադրություն դարձնել արտադրության տականքի և ֆնացորդների ոգտագործմանը, հատկացնելով ալդ աշխատանքին հատուկ աշխատակիցներ:

12. Կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում ապրիլի 1-ից սկսած անց կացնել յերկամսյակ, վորի ընթացքում կարգի բերել գործարանների բոլոր բակերը, մաքրելով դրանք անպիտք գուլքից:

2. ՎԱՌԵԼԻԲ

Զնայած հնգամյակի առաջին յերկու տարում վառելիքի պլանը գերակառարված է, աչնուամենայնիվ, նկատի ունենալով Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հսկայական աճումը, վառելիքի բալանսը լարված է: Վառելանյութի հիմնական շրջանները (Դոնբաս, Կուդրոս, Պոդմոսկովնի ավազան, փայտամթերումներ), շարունակում են թերակատարել իրենց արտադրական պլանները:

Անհրաժեշտ է՝

1. 1931 թվի հենց առաջին յեռամսյակում իսկ բեկում առաջացնել ածխի հանման և փոխադրման աշխատանքների մեքենայացման մեջ, մտցնելով կտրող մեքենաների անընդհատ աշխատանքի նոր մեթոդները (Կարտաշովի, Կասաուբովի, Ֆելիմոնովի, Լիբգարդտի մեթոդները) վոչ միայն Դոնբասի ածխահանքերում, այլ և ուրիշ ածխային շրջաններում, արագացնել նախապատրաստական աշխատանքների մեքենայացումը:

2. Կենսագործել ածխահանքերում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար այն հիմնական միջոցառումները, վոր նախագծել են կառավարությունն ու ԺՏԳԽ-ը, այն և աշխատանքի կազմակերպման նոր ձևերը (բրիգադներ և «անհարյազ» սխտեմ), բանվորների ամբացումը աշխատավայրին բանվորներին հանքերն իջեցնելու բարձրացնելու կարգավորումը հանքային տնտեսություն ամենապատասխանատու մասերի, համար աշխատանքի գրաֆիկներ մտցնելը, արտադրման նորմաները վերանայելը համաձայն աշխատանքի նոր մեթոդների, վոր մտցրել և առանձին արտադրական պրոցեսների մեքենայացումը:

3. Մշակել և հենց 1-ին յեռամսյակում կիրառել՝ ածխի վորակը բարձրացնելու ձեռնարկումները (մտցրնելով արտադրանքի վորակին համապատասխան աշխատանքի խրախուսիչ վարձատրություն, սանմանելով հանքերի հետ նրան հանձնած արտադրանքի վերաբերմամբ հաշիվ տեսնելը վոչ միայն ըստ հանձնված վառելիքի քանակի, այլ և ըստ վորակի): Ընթացիկ պարում սանմանել նոր տեխնիկական պայմաններ՝ ստանդարտներ յուրաքանչյուր հանքի համար:

4. 1931 թվին անպայման շահագործման մեջ

դնել Դոնբասում վոչ պակաս քան 15 նոր խոշոր շախտ, իսկ կապիտալ վերակառուցման յենթարկվող շախտերից՝ վոչ պակաս քան 20 շախտ:

5. 1931 թվին, բացի հիմնական պլանով նախատեսված շախտերից, փորել 16 նոր շախտեր Պոդմոկովնի ավազանում, 12—հետախուզական—շահագործելի շախտեր Կարապանդում և 19 միջակ և մանր շախտեր Ուրալում:


6. Առաջարկել ըստ ածխային միավորումներին և տեխտներին՝ մի ամսվա ընթացքում վերանայել կապիտալ աշխատանքները այն շախտերում, վորոնք հիմնական վերակառուցման մեջ են գտնվում, վորպեսզի առափնադույն չափով արագացվի նրանց շահագործումը, պարզեցնել հժանացնել և արագացնել այդ աշխատանքները: Առաջին հերթին տեխնիկապես սարքավորել այն շախտերը, վորոնք կոկացող ածուխ են արտադրում:

7. Մեքենաշինարարական գործարաններն ու մատակարարող կազմակերպությունները առանձնապես պիտի հսկեն, վորպեսզի վառելանյութի արդյունաբերություն հանդեպ իրենց պարտավորությունները ամբողջությամբ և իր ժամանակին կատարեն:

8. Առաջարկել ծանր մեքենաշինարարության միավորմանը՝ անհապաղ ձեռնարկել նախագծելու և պատրաստելու փորձնական ժապավենատիպ կոնվեյերներ՝ ածուխը շարիկներով, բրնձրերգներով և թեքություններով փոխադրելու համար:

9. Ձեռնարկել հենց ընթացիկ տարում Դոնբասում կառուցելու ձեռնարկներ:

10. Կոնվեյերային լիֆթերի և ավանությունների տա-



լիս ԽՍՀՄ ԺՏԳԽ-ի վերոշմանը, վերով 1931 թ. նալթի արտադրական ծրագիրը 25,5 միլ. տոննից ավելացվում է մինչև 27,5 միլ. տոննի և վստահ, վոր այդ ծրագիրը կկատարվի:

Միաժամանակ կոնֆերենցիան անհրաժեշտ է գտնում ընդգծել այն կարևորագույնը, վոր ունի նալթիին արդյունաբերության համար անհրաժեշտ սարքավորումը ժամանակին ստանալը, իսկ հատկապես կարեվոր է, վորպեսզի մեքենաշինարարական գործարանները ժամանակին կատարեն կրեկինգի սարքավորումները պատրաստության նկատմամբ իրենց արտադրական ծրագիրը:

11. Փայտամթերումների ծրագրի կատարման համար անհրաժեշտ է առաջին հերթին.

ա) բարձրացնել փայտահատի և փոխադրողի աշխատանքի արտադրողականությունը, բարիփոխելով աշխատանքի կազմակերպումը ամենուրեք կազմակերպելով աշխատանքի բրիգադային սխեման, վորն իրեն արդարացրել է, ավելի լավ կազմակերպելով մատակարարումը.

բ) պակասեցնել ինչ միջոցով էլ լինի, փոխադրման հեռավորությունը միջին հաշվով վոչ պակաս քան 2 կիլոմետր, բազմացնել սառցի և լաստի ճանապարհները, կարգի բերել բոլոր սովորական ճանապարհները և բոլոր միջոցները ձեռք առնել թե մեխանիկական և թե ձիաքարշ տրանսպորտի արտադրողականությունը բարձրացնելու համար.

գ) փայտամթերման մեջ մտցնել լերկար ձողերով պատրաստելու ձևը, իսկ կլոր գերանները՝ պատրաստ

տել ստանդարտ չափերով, միաժամանակ արգելել ջանի փայտը կլպելը:

12. Վառելանյութը խնայելու նպատակով անհրաժեշտ դառնել՝

ա) վոչ ուշ քան 10 որվա ընթացքում քննել ձեռնարկություններում լեղած ռացիոնալացման բոլոր միջոցառումները և մանավանդ վառելանյութը խնայելու նկատմամբ բանվորները արած առաջարկները և անհապաղ կենսագործել դրանք.

բ) ստեղծել, իսկ յեթե արդեն գոյություն ունի, ուժեղացնել լուրաքանչյուր միավորման, տրեստի և ձեռնարկության կից հներգաբյուրո, վորի վրա պարտավորություն դնել կենսագործելու վառելիքի գործածություն խնայողություն ամբողջ աշխատանքը:

գ) առաջարկել բոլոր ձեռնարկություններին 2 շաբաթվա ընթացքում մշակել վառելանյութի և ելեկտրական եներգիայի ծախսերի իշկեցման նկատմամբ աշխատանքի ծրագրերը՝ իրագործելու համար կառավարություն դիրեկտիվը այդ իշկեցումը հասցնելու մինչև 15% և վառելանյութի գործածության նորմաները հասցնել մինչև կաթսան և հնոցը:

դ) առաջարկել Որգեկերգ տրեստին ծավալել իր աշխատանքը, ընդգրկելով 1931 թվին առավելագույն չափով ջերմունակ ձեռնարկությունները:

13. Առաջարկել բոլոր ձեռնարկություններին մի ամսվա ընթացքում վերանայել պակաս լիմիտներով նախատեսված աշխատանքների համար դրամական հատկացումները և ավելացնել հատկացումները ելեկտրոններգետիկ տնտեսության և վառելանյութերի տնտեսության գծով:

3. ՄԵՏԱՂ

1. Առաջարկել «Ստալ»-ի և Վոստոկստալ-ի վարչութիւններին և մետաղագործարանների ղեկեկաորներին՝ ստուգել անհապաղ յուրաքանչյուր ձեռնարկութեան, յուրաքանչյուր ցեխի և յուրաքանչյուր ազրեգատի մեջ աշխատանքների կազմակերպութիւնը այն հաշիւով, վոր առավելագուցն չափով ոգտագործվեն չեղած միջոցներն ու հնարավորութիւնները և մորիլի-զացիլալի լենթարկվին թագնված պաշարները, նրանց արտադրական պրոցեսների մեջ անհապաղ մտցնելու նպատակով:

2. Պլանի կատարման համար մղվող պաշարի կենտրոնական ճակատամասը ընդունել դոմնայի ցեխը, ձգտելով, վորպեսզի դոմնայի հնոցները լիակատար բեռնավորում ունենան և յուրաքանչյուր ազրեգատ կատարի և գերակատարի պլանով նախատեսված աւանելքները (դոմնայի հնոցի ծավալը արդուցնավիտ կերպով ոգտագործելը, չուգունի վորակը և ալլն):

3. Առաջարկել գործարաններին՝ ապահովել դոմնայի հնոցներին և մարտենյան ցեխերի աշխատանքների մեջ պլանային կապը, վճռականորեն ուժեղացնելով հալաքման ապարատների աշխատանքի խտնսիւթիւթունը:

4. Միջոցներ ձեռք առնել՝ մետաղագործարաններին լիովին հալթայթելու համար անհրաժեշտ ածուխ, հանածո, սնկեղ նյութեր, ֆլյուսներ, մետաղի լոմ:

5. Նկատի առնելով Դնիպրի գրուպպային պատկանող գործարանների մեծ տեսակարար կշիռը և հըրանց հեռավորութիւնը Դոնբասից, ամենակարճ ժա-

մանակամիջոցում ստեղծել այստեղ վառելանյութի նըվաղագուցն անհրաժեշտ հատուկ պաշար:

6. Ուրալի մետաղագործարաններին ուղարկվող վառելանյութերի համար սահմանել կալուն հասցեներ, արգելելով այդ վառելանյութերի հասցեների փոփոխումը ճանապարհին:

7. Անհրաժեշտ գտնել՝ հերթից դուրս ապահովել 1931 թվին կիր փշրելու համար անհրաժեշտ կազմակերպչական աշխատանքները:

8. Առաջարկել «Ստալ»-ի վարչութեանը սույն թվի փետրվարի 20-ից վոչ ուշ շահագործման մեջ դընել «Վերխուլցեո» հանքերի տեսակավորման կայանը և բոլոր միջոցները ձեռք առնել, վորպեսզի նա լիովին ծավալի իր աշխատանքները՝ համապատասխան գործարաններին կարիքներին:

9. Առաջարկել կոկսային սարքավորումներին և այն շախտերի կառավարիչներին, վորոնք ածուխ են մատակարարում կոկսային սարքավորումներին՝ անհապաղ իրագործել վորակական ցուցանիշների կատարումը մոխրայնութեան և ծծմբայնութեան ասպարիզում:

10. Նշելով, վոր մետաղագործարանների ունեցած սեփական փոխադրական միջոցների աշխատանքը անբավարար է (հիվանդ վագոններ և շոգեկառքերի մեծ տոկոսը, նրանց կանդաուսները, վերանորոգման անբավարարութիւնը և այլն), առաջարկել՝ բոլոր մետաղագործարաններին ամենակարճ ժամանակամիջոցում վճռական բեկում առաջ բերել գործարանների ներքին տրանսպորտի ունեցած բեռուսների մորիլի-զացիլալի և ոացիոնալ ոգտագործման գործում, իրա-

գործելով հատկապես այն ձեռնարկումները, վորոնք տրանսպորտը սպասարկող անձնակազմին զրգելու լին ինամբով վերաբերվել սարքավորմանը և առավելագույն չափով ոգտագործել աչն:

11. Անհրաժեշտ դոնել՝ մետաղագործարանների ներքին տրանսպորտի անձնակազմի վրա տարածել աշխատավարձի նորմաները, վորոնք գոյութլուն ունեն ձ. Ճ. Ժողկոմատի ցանցի մեջ:

12. Պատասխանատվութլուն դնել մետաղի պրոկատի ցեխերի պետերի վրա նարչադ-պատվերները ժամանակին կատարելու և ընթացիկ պրոկատը (զլանաքաշը) այդ պատվերին համապատասխան լինելու համար:

13. Պրոկատի ցեխի բանվորներին աշխատանքը թեթևացնելու, նաև «Ստալ»-ի և «Վոստոկստալ»-ի հանքային բակերը մեքենայացնելու նպատակով, 2 ամսվա ընթացքում մշակել յուրաքանչյուր գործարանի համար կոնկրետ պլան՝ ռացիոնալ կերպով դոնայի հնոցները հումուլթ փոխադրելու համար:

14. Կոնֆերենցիան հավանութլուն և տալիս այն վճռական միջոցառումներին, վոր ձեռնարկել և ԺՏԳԽ-ը՝ մեր կառուցվող հիմնական մետաղագործական հսկաներին՝ Մադնիտոստրոյին և Կուզնեցկոստրոյին՝ սարքավորումներով բավարարելու նպատակով, և առաջարկում և բոլոր միավորումներին և հալթայթիչ գործարաններին՝ հատուկ հսկողութլուն սահմանել այդ պատվերները կատարելու ընթացքի վրա, մորելիզացիայի յենթարկելով նրանց շուրջ բանվորական մասսաները և հոսարակայնութլունը: Կուսակցութլան Կենտկոմի 1931 թվի հունվարի 25-ի վորոշումը Մադնիտոստրոյի մասին ամենայն վճռականութլամբ պիտի իրագործվի:

15. ԺՏԳԽ-ը, մեքենայինարար միավորումներն ու հալթայթիչ գործարանները պարտավոր են ապահովել սարքավորումներով, ինչպես Մադնիտոստրոյը և Կուզնեցկոստրոյը, այնպես էլ 1931 թվին գործի դրցվող հետևյալ ագրեդատները Հաբավի և Ուրալի վերակառուցվող մետաղագործարաններում, նաև նրանց համար սպասարկու դեր կատարող բոլոր շենքերն ու կառուցվածքները, այն է՝

Դոմնայի հնոցներ՝ Ձերժինսկու անվան № 7, Տոմսկու անվան № 5 և № 6, Ստալինի № 3/6, Ֆրունզելի № 2, Կադհևի № 2, Չուսովի № 3, Կուշվինի № 3, Նիժնետագոյի № 1 և Կոսոգորի № 3 գործարաններում:

Մարտնի հնոցներ Ձերժինսկու անվան, Տոմսկու անվան, «Կարմիր Հոկտեմբեր», Կ. Լիբկնիխի անվան, Տագանրոգի, Վիկտուսկի, Սուլինսկի, Բելորեցկի և Ն. Սալդինսկի գործարանում:

16. Վորպեսզի Ուրալում աշխատող գործարանները իրապես սկսեն տրտադրել վորակավոր պողպատ, անհրաժեշտ է՝ նութական-տեխնիկական մատակարարման ձեռնարկումների հետ միատեղ՝ Ուրալի հիմնական վերակառուցվող գործարանները ապահովել կադրերով:

17. Կոնֆերենցիան գտնում է, վոր մետաղի ծախսումը և պրոկատի պողիցիաները կրճատելու աշխատանքը կարևորագույն առաջադրանք պիտի դառնա բոլոր մետաղագործարաններին, գիտական—հետազոտական ինստիտուտներին, ռացիոնալացնող կազմակերպութլունների համար: Միավորումներին և գործարաններին առաջարկվում է՝ մի ամսվա ժամանակամիջոցում մշակել աշխատանքի պլան՝ մետաղի տեսակարար

ծախսումը 15 տոկոսից վոչ պակաս իջեցնելու մասին կառավարութեան դիրքակալը կենսագործելու համար, ուստի առաջարկվում է:

ա) Վերանայել ձեռնարկություններում մշակման համար գոյութիւն ունեցող մեթոդները՝ ձուլվածքի և կռելու ժամանակ մեջ ավելորդ թողնված փայերը առաջնագույն չափով կրճատելու համար:

բ) լայնորեն դժուարորձել ելեկտրոգոյման կիրառումը թե գամակապը («կլոպկա») փոխարինելու և թե բրակն ու բեմնուր դռքելու նպատակներով:

գ) վերանայել մետաղի պրոկատի նոմանկլատուրան, վերջինը կրճատելու համար, նաև բարդ ու թանգ պրոֆիլների ծախսը նվազեցնելու նպատակով:

դ) կանոն սահմանել բոլոր գործարանների և ձեռնարկությունների համար, վորպեսզի արտադրութեան մեջ նոր մեքինաների մուծում կատարվի անպատճառ այն հաշվով, վոր պրոկատի պրոֆիլները, չափերն ու մարկաները համաձայնեցված լինեն թե գործարանում արդեն գործածվող պողիցիաներին և թե ստանդարտի նորմաներին:

Գլանաքաշի (պրոկատ) պողիցիաների քանակի պակասելը և մետաղի ծախսի իջեցումը վոչ մի կերպ չպիտի անդրադառնա արտադրանքի վորակ վրա:

18. Շտապ կարգով վերանայել շինարարութեան համար արտադրվող մետաղի պրոֆիլներն ու լեկարությունները և արդեն իսկ 1931 թվին լայնորեն կիրառել կլեկտրոգոյմումը:

19. Հատկապես ուշադրութեան կենտրոնում ունենալ՝ գունավոր մետաղները սև մետաղներով փոխա-

րինելու խնդիրը, իսկ առանձնապես՝ մետաղի պակսի-րովկան (բիմետալ):

Պարտավորեցնել սև և գունավոր մետաղագործութեան միավորումները, վորպեսզի 1931 թվից իսկ անցնեն բիմետալին՝ թերթի, ժապավենների և մետաղալարի ձևերով՝ և արմատացնել այն՝ ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում և՛ առաջին հերթին՝ մեքենաշինարութեան մեջ:

20. Գունավոր մետաղները խնայելու և փոխարինելու հետ միաժամանակ սուր կերպով ծառանում և մեր առաջ գունավոր մետաղագործութեան մեջ արտադրութիւնը վճռականորեն ընդարձակելու խնդիրը, վոր հետամնացութիւնը արդելք և հանդիսանում միշտ ճյուղերի, մանավանդ կլեկտրոտեխնիկայի դարգացմանը: Գոնֆերենցիան բացարձակապես անհրաժեշտ և գանում՝ ժողովրդական տնտեսութեան կարիքների տեսակետից՝ այն մեծ ծրագիրը, վոր ԺՏԳՍ-ը առաջադրել և գունավոր մետաղագործութեանը, և կոչ և անում հանքերում և գունավոր մետաղագործութեան գործարաններում բոլոր աշխատողներին լարել ուժերը այդ ծրագիրը իրագործելու համար: Միաժամանակ կոնֆերենցիան շեշտում և այն մեծ կարևորութիւնը, վոր գունավոր մետաղագործութեան համար ունի ժամանակին մատակարարումը, մանավանդ սարքավորման դժով, ծրագիրը լիովին ապահովելու համար:

4. ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մեքենաշինութեան առաջ 1931 թվին ծառացած և կարևորագույն մի խնդիր՝ ստեղծել նշանակալի քանակութեամբ նորանոր սարքավորումներ, վորոնք լե-

բեք մեր յերկրում չեն արտադրվել, յուրացնել արտադրութեան մեջ մեքենաների մի ամբողջ շարք նորոնոր ձևեր, իսկ շատ դեպքերում՝ վոչ միայն յուրացնել, այլ և կառուցել նորերը, Միաժամանակ 1931 թվի համար առաջադրված արտադրութեան ծավալը (տարեկան աճում 86 օ/ո-ով) ահագին աշխատանք և պահանջում, վորպեսզի դրսևորվեն և գործի գցվեն թագնված կարողությունները, վերջապես, մեքենաշինարարութիւնը պարտավոր և մետաղի դեֆիցիտի պայմաններում մի շարք միջոցներ ձեռք առնել իրեն տրամադրվող մետաղը առավելագուցն չափով ոգտագործելու համար:

1. Արդեն իսկ 1931 թվին անհրաժեշտ և հաստատորեն լուծել աշխատավոր գործարաններն ոգտագործելու խնդիրը, սահմանափակելով յուրաքանչյուր գործարանի արտադրանքի նոմինկլատուրան և իրագործելով հիմնական գործարանների մասնագիտացումը և մեքենաշինական գործարանների կոոպերացումը թե ճյուղային և թե շրջանային մասշտաբներով, վորի համար առաջարկվում և՛

ա) բոլոր գործարաններին և միավորումներին 1931 թվի առաջին կիսամյակում ավարտել սարքավորման հաշվառումը, նրա պասպորտիզացիայի հիման վրա:

բ) միավորումներին և ժՏԳԽ-ին՝ 1931 թվին ավարտել գործարանների վերակառուցման պլանների քննությունը և հաստատումը մեքենաշինական արդունարերութեան բոլոր միավորումների նկատմամբ.

գ) Միավորումներին և ժՏԳԽ-ին տեղական մարմինների 3 ամսվա ընթացքում ստուգել մեքենաշինական

նական գործարանի միջև կիսաճարեկառուցի յեվ մեքենայական մասերի վերաբերմամբ գոյութիւն ունեցող փոխանակութիւնը առանձին գործարանների մեջ կոոպերացիան (համագործակցութիւնը) առավելապես արմատացնելու տեսակետից, վորն իրապես հնարավորութիւն կտա նրանց մասագիտանալու ինչպե՛ս և նվազեցնելու հանդիպական փոխադրութիւնները:

2. Ի հաշիվ գոյութիւն սենցող բյուրոների ավելացման և նրանց կենտրոնացման, անհրաժեշտ և ստեղծել մեքենաշինութեան հիմնական տեսակների հատուկ մասնագիտական կոնսորուկտորական բյուրոներ:

